«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Ռուս-հայկական համալսարանի գիտական գծով
պրոռեկտոր, փ.գ.դ., պրոֆեսոր Պ.Ս. Ավետիսյան
«27» մայիսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

Ռուս-հայկական համալսարանի
(առաջատար կազմակերպության)

Նարեկ Վահագնի Հարությունյանի «Քրեական պատասխանատվությունը անօրինական միգրացիայի կազմակերպման համար. տեսական և գործնական հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ռուս-հայկական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնը՝ մասնակցությամբ ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Շ. Ծաղիկյանի, ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանի, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Թամազյանի, ի.գ.դ., պրոֆեսոր Թադևոսյանի, ի.գ.թ., դոցենտ Հ.Ռ. Պետրոսյանի քննարկեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ *Նարեկ Վահագնի Հարությունյանի «Քրեական պատասխանատվությունը անօրինական միգրացիայի կազմակերպման համար. տեսական և գործնական հիմնախնդիրները»* թեմայով *ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»* մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ժամանակակից աշխարհում միգրացիոն մեծ հոսքերի կառավարման գործընթացում ինչ խոսք իր ուրույն դերակատարությունն ունի անօրինական միգրացիայի դեմ պայքարը: Անօրինական միգրացիայի դեմ պայքարը, որի շրջանակներում առանձնակի և առավել բարձր վտանգավորության աստիճան ունի անօրինական միգրացիայի կազմակերպումը, որպես քրեական օրենքում նախատեսված առանձին հանցակազմ, միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է և ընկալվում է որպես թե՛ անձանց իրավունքների, թե՛ ազգային անվտանգության ապահովման գործուն երաշխիք: Հայաստանի Հանրապետությունում և տարբեր երկրներում անօրինական միգրացիայի դեմ պայքարում տարբեր հարթություններում ի հայտ են եկել տարաբնույթ խնդիրներ, մասնավորապես, տեսական հարթությունում առկա չէ միասնական մոտեցում անօրինական միգրացիայի կազմակերպման բնույթի, հանցակազմի հատկանիշների, համապատասխան դրույթի դիսպոզիցիայում սահմանված նպատակների և

դրա համար քրեական պատասխանատվության հետ հարաբերակցության շրջանակներում: Տարբեր են նաև մոտեցումները քրեական օրենքով սահմանված համապատասխան դրույթով նախատեսված առվել բարձր վտանգավորության աստիճան ունեցող արարքների նկատմամբ: Անօրինական միգրացիայի կազմակերպումը ուղիղ և մեծ սպառնալիք է տրանսնացիոնալ հանցավորության աճի համար: Այս ամենով է պայմանավորված ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անօրինական միգրացիայի կազմակերպման, որպես հանցակազմ, էության, բնույթի, նպատակների, սուբյեկտիվ և օբյեկտիվ հատկանիշների հետազոտումը, տեսական մոտեցումների, միջազգային փորձի և միջազգային իրավական ակտերի հիման վրա գործող մարմինների կողմից մշակված չափորոշիչների, որակավորման և հարակից հանցակազմերից տարանջատման հիմնախնդիրների վերլուծությունը ունի էական նշանակություն անձանց նշված դրույթով քրեական պատասխանատվության ենթարկելու և ուսումնասիրվող հանցակազմին առնչվող խնդիրների լուծման ուղիների մշակման և ներդրման տեսանկյունից: Քրեական օրենքում համապատասխան հոդվածի ատենախոսի կողմից առաջարկվող վերախմբագրման տարբերակը առավել կարևոր է հանցակազմի ծանրացնող հանգամանքների տեսանկյունից և բխում է դրանց վերանայման անհրաժեշտությունից:

Իրականացված հետազոտության առավելություններից է ուսումնասիրության առարկայի բազմակողմանիությունը՝ կարգավորող միջազգային և ներպետական իրավական նորմերի, արտասահմանյան երկրների իրավական կարգավորումների ուսումնասիրությունը, դոկտրինալ աղբյուրները:

Հեղինակի կողմից հետազոտության առարկան կազմող վերը նկարագրված հիմնահարցերի ուսումնասիրման միջոցով անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության էության բացահայտումը թույլ է տալիս պարզել այդ տվյալ հանցակազմի առանձնահատկությունները՝ միգրացիոն հոսքերի կառավարման և քրեաիրավական համակարգում: Հետազոտության ընթացքում արված հետևությունները պայմանավորում են ՀՀ քրեական օրենսգրքում անօրինական միգրացիայի կազմակերպման վերաբերյալ դրույթի վերախմբագրման և կոնկրետացման անհրաժեշտությունը:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ Ն. Հարությունյանը հիմնականում իրագործել է իր առջև դրված ուսումնասիրության նպատակները: Վերոգրյալը հիմնավորվում է ատենախոսի կողմից առաջ քաշված հետևյալ խնդիրների լուծմամբ.

- ուսումնասիրվել և բացահայտվել է բնակչության միգրացիայի էությունը, տեսակները և դրսևորման ձևերը.

- ուսումնասիրվել և վեր են լուծվել անօրինական միգրացիայի դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումները.

- վեր են հանվել անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության տեսական խնդիրները՝ ՀՀ-ում և արտասահմանյան երկրներում.

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա վեր են հանվել ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ հատկանիշներին առնչվող հիմնախնդիրները.

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա վերլուծվել են անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտիվ հատկանիշներին առնչվող հիմնախնդիրները.

- վերլուծվել և սահմանվել են անօրինական միգրացիայի կազմակերպման առավել վտանգավոր տեսակները.

- վերլուծության են ենթարկվել անօրինական միգրացիայի կազմակերպման հանցակազմի վարչական իրավախախտումներից և հարակից հանցակազմերից տարանջատման հիմնահարցերը:

Ուսումնասիրության տեսական հիմք են կազմել քրեական ոլորտի առաջադեմ գիտնականների գիտական աշխատությունները: Հեղինակն ուսումնասիրելով վեր հանված հիմնախնդիրները՝ վիճահարույց հարցերի շուրջ իր գիտական միտքը համադրել է այլ գիտնականների տեսակետների հետ:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության մեծաքանակ աղբյուրների օգտագործմամբ, հարուստ իրավական հիմքով:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական թեզում առկա են որոշ վիճարկելի դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ, չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես.

1. Անօրինական միգրացիայի կազմակերպման՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի վերլուծության շրջանակներում ատենախոսը անօրինական միգրացիայի բնութագիրը ներկայացնելու նպատակով անդրադարձել է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքին, որով, ի թիվս այլնի, սահմանվում են օտարերկրացիների ՀՀ մուտք գործելու, ՀՀ-ում գտնվելու, բնակվելու, տարանցիկ երթևեկելու և ՀՀ-ից դուրս գալու իրավական հիմքերը:

Ատենախոսի կողմից անդրադարձ չի կատարվել նշված հոդվածով սահմանված «առարկա»-ին՝ մասնավորապես անօրինական միգրացիայի կազմակերպումը իրականացվում է օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի ՀՀ մուտքը, ՀՀ-ում գտնվելը, տարանցումը և ՀՀ-ից դուրս գալը սահմանված կարգի խախտմամբ կազմակերպելու միջոցով: Հետևաբար, որքո՞վ է հնարավոր օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին դիտարկել որպես տվյալ հանցակազմի առարկա կամ միջոց:

Վերը նշված հարցի շրջանակներում անհրաժեշտ է հստակեցնել ուսումնասիրվող քրեաիրավական դրույթում «օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ» եզրույթը՝ «Օտարերկրացիների մասին» օրենքով կիրառվող «օտարերկրացի» եզրույթի համեմատությամբ:

Բացի այդ, վերը նշվածի համատեքստում անօրինական միգրացիայի կազմակերպման վերաբերյալ քրեաիրավական դրույթում որպես սահմանված կարգի խախտում դիտարկվում է միայն ՀՀ մուտքի, ՀՀ-ում գտնվելու կամ տարանցման համար խախտումները, մինչդեռ «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված պահանջներում է նաև ***օտարերկրացու բնակության օրինականացումը:***

Հետևաբար, անօրինական՝ միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ կողմը արդյո՞ք համալրման կարիք ունի՝ վերջիններիս ՀՀ-ում օրինական գտնվելու ժամկետի լրանալու և այնուհետև բնակության կարգը խախտելու պարագայում:

Հարկ է նկատել, որ օտարերկրացիների ՀՀ-ում գտնվելու կարգի ուսումնասիրության շրջանակներում հեղինակը անդրադարձել է «Օտարերկրացիների մասին» օրենքի 7-րդ հոդվածում նշված՝ առանց վիզայի ռեժիմի երկրների օտարերկրացիների ՀՀ-ում գտնվելու օրինական 180-օրյա ժամկետին, մինչդեռ նույն դրույթով սահմանված է վավերապայման՝ եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմնագրերով:

Հայաստանի Հանրապետությունը ունի մի շարք պետությունների հետ կնքված միջազգային համաձայնագրեր, որոնց շրջանակներում տվյալ երկրների օտարերկրացիների ՀՀ-ում օրինական գտնվելու ժամկետը այլ է:

2. Հեղինակն իր աշխատության մեջ անդրադարձել է շահադիտական դրդման, շահադիտական նպատակի հասկացություններին: Հեղինակն արդարացիորեն նշել է, որ քրեական օրենսդրությունում բացակայում է մեկ միասնական մոտեցում «շահադիտական» հասկացությանը, այդ թվում՝ «շահադիտական դրդում» կամ «շահադիտական նպատակ» հասկացություններին: Հեղինակը առաջարկել է հրաժարվել «շահադիտական նպատակ» եզրույթից:

Մինչդեռ, գտնում ենք, որ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն ունի ոչ միայն «շահադիտական դրդում» հասկացությունը, այլև առավել անհրաժեշտ են ատենախոսի դիտարկումները և վերլուծությունները ՀՀ և մի շարք այլ պետությունների քրեական օրենսդրությունում կիրառվող «շահադիտական, անձնական այլ շահագրգռվածություն կամ խմբային շահեր» եզրույթի ամբողջական համեմատությամբ:

Այսպես, նշված եզրույթները խորքային վերլուծության են ենթարկվել ոչ միայն մի շարք գիտնականների /օրինակ՝ Ա. Ի. Դոլգովա, Բ.Ս. Վոլկովա, Ա.Ի. Ռառոգ/, այլև դեռևս նախկին ԽՍՀՄ Գերագույն Դատարանի և ՌԴ Գերագույն Դատարանի տարբեր հանցակազմերի վերաբերյալ կիրառման հիմնախնդիրների մասին որոշումներով:

Այսպես, օրինակ, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շրջանակներում «շահ» հասկացությունը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են ուրիշի գույքի անօրինական և անհատույց տիրանալու ձգտումը կամ մեղավորի գույքային /նյութական/ հետաքրքրվածությունը, որով առաջնորդվելիս մեղավոր անձը կատարում է ուրիշի գույքը հօգուտ իրեն և /կամ/ այլ անձի դարձնելուն ուղղված գործողություններ:

Պետական իշխանության դեմ ուղղված շահադիտական հացագործությունների շրջանակներում, ՌԴ Գերագույն Դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում նշված բնույթի հանցագործությունների *շահադիտական շահագրգռվածությամբ կատարելը բնութագրվում է որպես ուրիշի գույքը անօրինական անհատույց հօգուտ իրեն դարձնելու հետ չկապված և գույքային օգուտ ստանալուն ուղղված գործողություններ*:

Բացի այդ, «շահադիտական նպատակ» եզրույթից հրաժարվելու առաջարկի տեսանկյունից առավել կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ նպատակը և շարժառիթը /դրդումը/ սուբյեկտիվ կողմի էապես տարբերվող հատկանիշներ են: Մասնավորապես, նպատակն *ապագա արդյունքի մտավոր մոդելն է, որին հասնելուն ձգտում է անձը հանցագործություն կատարելիս*, իսկ շարժառիթը՝ դա որոշակի պահանջմունքներով կամ հետաքրքրվածություններով պայմանավորված *ներքին դրդիչ ուժն է, որը անձի մոտ*

առաջացնում է հանցագործություն կատարելու վճռականություն և որով անձը առաջնորդվում է հանցագործություն կատարելիս:

Վերը նշվածի համատեքստում անհրաժեշտ է հեղինակի կողմից հիմնավորվի «շահադիտական նպատակ» եզրույթից հրաժարվելու տեսլակետը:

3. Հաշվի առնելով, որ պաշտպանության հանվող 4-րդ և 5-րդ դրույթները վերաբերում են ուսումնասիրվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի այնպիսի պարտադիր հատկանիշին, ինչպիսին է դրդապատճառը, ուստի՝ առանձին կետով «շահադիտական նպատակ» եզրույթից հրաժարվելու դիտարկումը որպես պաշտպանության հանվող առանձին դրույթ ներկայացնելը նպատակահարմար չէ, քանի որ պաշտպանության հանվող հաջորդ կետով հեղինակի կողմից առաջարկվում է նշված եզրույթը փոխարինել «շահադիտական, անձնական այլ շահագրգռվածություն կամ խմբային շահերից ելնելով» հասկացությամբ:

Այսինքն՝ պաշտպանության հանվող 5-րդ դրույթով «շահադիտական նպատակ» հասկացությունը այլ եզրույթով փոխարինելու առաջարկն ինքնին ներառում է «շահադիտական նպատակ» եզրույթից հրաժարում:

Միաժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի ատենախոսությունում հեղինակի կողմից անդրադարձ կատարվեր «շահադիտական, անձնական այլ կամ խմբային շահագրգռվածություն» եզրույթի բովանդակությանը, բնութագրին և էությանը՝ համապատասխան վերլուծությամբ և առաջարկներով:

4. Անդրադառնալով «կեղծ փաստաթղթուղթ» հասկացությանը /էջ՝ 75 և եզրակացություն/, հեղինակը ատենախոսության մեջ անօրինական միգրացիայի կազմակերպման որպես 470-րդ հոդվածով սահմանված հանցակազմի մաս է դիտարկում ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածով սահմանված արարքը, մինչդեռ 457-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտի շրջանակը նեղ է, հատուկ սուբյեկտ է, իսկ ՀՀ և միջազգային իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեն փաստաթղթերի կեղծման տարատեսակ ձևեր, որոնց սուբյեկտի շրջանակը շատ ավելի լայն է, քան 457-րդ հոդվածով նախատեսված շրջանակը:

Հաշվի առնելով, որ ատենախոսը անդրադարձ է կատարել «փաստաթուղթ» և «կեղծ փաստաթուղթ» եզրույթներին, ապա անհրաժեշտ էր, որպեսզի հեղինակի կողմից խորքային վերլուծության ենթարկվեին ժամանակակից աշխարհում ընդունված և հաստատված փաստաթղթերի և դրանց կեղծման տեսակներին:

5. Ատենախոսության մեջ խորքային վերլուծության են ենթարկվել տարբեր պետությունների օրենսդրական կարգավորումները և ուսումնասիրվող հանցակազմի ձևակերպումները, միջազգային իրավական ակտերը, սակայն ատենախոսությամբ չեն ենթարկվել վերլուծության անօրինական միգրացիայի դեմ պայքարի մեխանիզմները և միջազգային փորձը, ինչն առանցքային նշանակություն ունի անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրների լուծման համար /այդ թվում՝ համապատասխան հանցակազմը նախատեսող հոդվածի նոր խմբագրությամբ շարադրելու համատեքստում/:

6. Ատենախոսության թեմայի մի մաս է կազմում անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության գործնական հիմնախնդիրների վերլուծությունը, մինչդեռ ատենախոսության ամբողջ տեքստում ատենախոսի կողմից չեն ենթարկվել վերլուծության թեմային առնչվող գործնական հիմնախնդիրները, այսինքն չեն բացահայտվել դրանք և բացակայում են գործնական հիմնախնդիրների լուծման հեղինակի մտքերը, դիտարկումները և առաջարկները:

7. Ատենախոսը գործնական հիմնախնդիրների վերհանման, վերլուծության պահանջի ներքո որևէ անդրադարձ չի կատարել իրավակիրառ պրակտիկայում առկա և առաջացող հիմնախնդիրներին, տվյալ տեսակի հանցավորության բացահայտման, ինչպես նաև այնուհետև քրեական վարույթների ներկայիս /ինչպես նաև առնվազն նախորդ քրեական օրենսգրքով կիրառման ընթացքում արդեն իսկ առաջ եկած/ քննչական և դատական պրակտիկայից բխող հիմնախնդիրներին:

Հատկապես, կարևոր է Միջազգային քրեական դատարանի, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ինչպես նաև առաջին ատյանի դատարանների դատական ակտերի ուսումնասիրումը:

Բացի այդ, նշվածի համատեքստում առավել կարևոր է Մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, ՀՀ Քննչական կոմիտեի, ՀՀ գլխավոր դատախազության և այնուհետև դատական պրակտիկայից առնվազն վերջին 7-8 տարիների ընթացքում բխող ուսումնասիրությունների, զեկույցների և առկա տեղեկատվության վերլուծությունը: Միևնույն լրատվամիջոցի կողմից կատարված հրապարակումները ՀՀ ԱԱԾ գործունեության վերաբերյալ ինքնին չեն կարող նպաստել ատենախոսության շրջանակներում բավարար չափով անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության գործնական հիմնախնդիրների վերհանմանը և դրանց լուծման ուղիների մշակմանը:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք հիմնականում կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Նարեկ Հարությունյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության հիմնախնդիրներին վերաբերող տեսական համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.05 - «*Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք*» մասնագիտությամբ:

Քննարկվել և հավանության է արժանացել Ռուս-հայկական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի 2026 թ. Մայիսի 27-ին, արձանագրություն թիվ 13.

Ռուս-հայկական համալսարանի իրավունքի
Ինստիտուտի քրեական
և քրեադատավարական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ն. Յու. Զոհրաբյան

Հաստատում եմ՝
ՌՀՀ գիտքարտուղար, բ.գ.թ., դոցենտ Ռ.Ս. Կասաբաբովա